

ԲԱՌԱՅՈՒՆ ՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայերենի յուրաքանչյուր բարբառ ունենալով իր ուրույն համակարգը, միաժամանակ մի ընդհանուր համակարգի՝ հայոց լեզվի դրսևորումներից մեկն է։ Բարբառների համակողմանի քննությունը ոչ միայն կարող է բացահայտել միջբարբառային ընդհանրություններն ու այս կամ այն բարբառի առանձնահատկությունները, այլև՝ մի կողմից բարբառների, մյուս կողմից արդի դրական հայերենի առնչությունները։ Բարբառները անգնահատելի նյութ են տալիս նաև լեզվի պատմության տարբեր հարցերի, լեզվաքերականական այս կամ այն կարգի առաջացման, նրա պատմական զարգացման ընթացքի լուսաբանման վերաբերյալ։

Հայ լեզվաբանության մեջ արդեն անառարկելիորեն ընդունելի է համարվում այն թեզը, ըստ որի հայ բարբառները որպես համակարգ գրաբարից հին չեն։ Հանրահայտ ճշմարտություն է նաև այն, որ բարբառային որոշ բառեր, բառաքերականական ձևեր ավելի հին ակունքներ ունեն՝ նաև գրաբարում չավանդված, որոնք կոչվում են բարբառային հնաբանություններ։ Այստեղ հնաբանություններ անվան տակ նկատի ունենք ինչպես վերը նշված, այնպես էլ գրաբարում ավանդված, սակայն արդի գրական հայերենում ու որոշ բարբառներում չգործառվող կամ էլ նվազ գործածական բառերն ու բառաձևերը։

Բարբառային հնաբանություններին (հատկապես գրաբարում չավանդված) վերջին ժամանակներս զգալի ուշադրություն է դարձվում¹։ Այդպիսիք շատ են Ղարաբաղի բարբառում։ Հիշենք միայն ձայնդարձի հայտնի երեւվոյթը, որի մի շարք ցայտուն օրինակներ առկա են բարբառում. ալսպես՝ յսաչ-յսեչ(ակ), շեշտ-շիշտ, քերք-քարք(եղ) և այլն։

Ձայնդարձը հիմնականում նախադրաբարյան երևույթ է, և հայերենի զրավոր ավանդման շրջանից (V դ.) այն արդեն լեզվական գործուն երևույթ չէր դիտվում։

Ղարաբաղի բարբառը հարազատորեն է պահել նաև գրաբարյան շատ ձևերույթներ։ Բարբառի բառապաշարի, քերականության թուցիկ քննությունն իսկ վեր է հանում գոաբար-բարբառ շատ առնչություններ։ Հայերենի բոլոր բարբառներն էլ առ այսօր պահում են արդեն հին համարվող, գրաբարյան տարրեր, բայց բարբառներից առանձնանում են այնպիսիները, որոնցում այդ տարրերը ավելի մեծ չափով են ընդգրկում բառապաշարի և քերականության ոլորտները։ Այդպիսին է և Ղարաբաղի բարբառը, որով հաղորդակցվող բնակ-

1 Գ. Զահեկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, նույն հիդինակի մի շարք այլ աշխատություններ ու ստուգաբանություններ, էդ. Աղայան, Բարբառային հնագույն տարրերություններ հայերենում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1953 թ. 5) և այլն։

չութիւն հիմնական զանգվածը կենտրոնացված է պատմական Սյունիք և Արցախ նահանգներում²։

Գրաբար-բարբառ առնչությունների լուսաբանումը ինքնանպատակ գործ չէ։ Այն նպաստում է բացահայտելու ինչպես լեզվական այս կամ այն երևույթի վիճակն ու զարգացումը հենց գրարարի համակարգում, այնպես էլ բարբառների ծագման ժամանակաշրջանի, լեզվական տվյալ երևույթի բարբառներում կրած փոփոխությունների հարցերը։

Հայտնի է, որ հայ բարբառների բուռն զարգացման ու իրարից տարբերակման շրջանը սկսում է միջինհայերենյան փուլից։ Պատմաքաղաքական, տնտեսական մի շարք անբարենպաստ գործոններ, միասնական ազգային ու պետական լեզվի բացակայություն, ժողովրդի տարբեր հատվածների միմյանց հետ հաղորդակցվելու դժվարություն, երբեմն նաև անհնարինություն, այլ լեզուների անխոչընդոտ ազդեցություն և այլն նպաստում են այդ երևույթին։ Բնականաբար, որքան մեծ է այս կամ այն բարբառում գրաբարյան տարրերի տոկոսը, այնքան այդ բարբառը, որպես համընդհանուր լեզվի տարածքային տարբերակ (իհարկե ոչ այսօրվա դրությամբ ընդգծված բարբառային տարբերություններով) հին ակունքներ ունի։ Գրաբարյան տարրերը, եթե ոչ ամբողջովին, ապա գոնե զգալի մասով բնորոշ են եղել այս կամ այն տարածքին հենց գրաբարի գործածության շրջանից, երբ վերջինս համընդհանուր լեզու էր, որովհետև միջին հայերենի շրջանում, երբ գրաբարի գործածական ոլորտները զգալիապես կրճատվել էին, այն ժողովրդի խոսակցական լեզուն չէր (հետևաբար նաև անհասկանալի), բացառվում էր գրաբարյան բառերի ու քերականական ձևերի առատ մուտքը հայ բարբառներ, մանավանդ այնպիսիների, որոնք հաճախական չէին նաև միջին հայերենում։ Այդ տեսանկյունից բարբառների բառապաշարի այդ շերտի ուսումնասիրությունը կարող է նպաստել նաև ոչ լեզվական բնույթի որոշ հարցերի պարզաբանմանը³։

Նկատենք, որ գրաբարյան տարրերը ոչ թե քարացած, այլ ընդհանրապես՝ գործունե երևույթներ են բարբառներում, որովհետև շնայած միջին հայերենի ժամանակներից սկսած և մինչև XX դ. սկզբները հարատևող օտար ազդեցությունների առատ ներթափանցմանը, որի հետևանքով դուրս էին մղվում հայերեն բառերը կամ լավագույն դեպքում դառնում հոմանիշներ, բարբառների գրաբարյան տարրերի զգալի մասը, շնորհիվ հաճախական ու ակտիվ գործածության, առայսօր էլ կենդանի ու գործունե է բարբառներում։

Ղարաբաղի բարբառի բառապաշարի մի զգալի մասը ավանդված է գրաբարում, սակայն կան և այնպիսի բառեր, որոնք գրաբարյան կազմություններ լինելով (խոսքը վերաբերում է հատկապես բարդ բառերին), գրաբարում

² Վերջին տարիներս մի շարք ուսումնասիրություններում ուշադրություն է դարձվում բարբառում գրաբարյան դրսևորումներին (Կ. Դավթյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզ, Երևան, 1966, Ա. Պողոսյան, Հաղրուփի բարբառը, Երևան, 1965, Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975)։ Ղարաբաղի բարբառ անվան տակ այստեղ նկատի ունենք պատմական Արցախ և Սյունիք նահանգներում գործառնող ընդհանուր բարբառը, որի սկզբնական և ուշ հետադարձների կողմից վերջին ժամանակներս բարբառներ, ենթաբարբառներ կամ խոսվածքներ դիտվող միավորները։ Հնարավոր է, որ բերվող օրինակներն մի մասը չլինի պատմական Արցախի և Սյունիքի որոշ խոսվածքներում։

³ Օրինակ, Ղարաբաղի բարբառում գրաբարյան բառապաշարի ու քերականության, այլև նախագրաբարյան որոշ երևույթների առկայությունը լրացուցիչ փաստարկ է Արցախում հայերենի, իրոք, վաղ շրջանից գործածության մասին։

ավանդված չեն։ Ուշադրության են արժանի նաև բարբառի, այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնք արդի գրական հայերենում չեն օգտագործվում կամ նվազ գործածական են։ Ահա մի քանի օրինակներ։ Բուտ արմատից արդի հայերենում կազմված է բտել բայը, որը պոլի ձևով օգտագործվում է և բարբառում։ Գրաբարում կա և համապատասխան գոյականը՝ բուտ «ուտելիք, կերակուր»՝ բառի գոյականական ձևը խորթ չէ և Ղարաբաղի բարբառին՝ պուտ, որտեղ առկա է Նի-ծ-պ օրինաչափ հնչյունափոխությունը։

Գրաբարյան կեղ «վերքի փառ» գոյականը արդի հայերենում հիմնականում հանդես է գալիս որպես բարդ բառի բաղադրիչ⁴ (հմմտ. քաղցկեղ), իսկ բարբառում նաև ինքնուրույն ու տարածված կիրառություն ունի։ Ավելին, կալ արմատի հետ կազմում է նաև դերբայական մի շարք ձևեր՝ կըղըկալիլ, կըղակալած և այլն։ Կօտէգ, «ձագ», գիրգյամօտ (շաբաթ օրը) պիցիւթէնիլ «ձայնը բարձրացնել» բառերը այսօր բարբառային են համարվում. բայց նշվածները նաև գրաբարյան են՝ կօտակ, կիրակամօտ, բարձրաձայնեմ ձևվերով։ Նոբել գրաբարում ունի ճնորոգել, նորից կատարել իմաստը։ «Զմոռացեալ սուգն նոբեաց կրկին»⁵։ Բառն այդ նշանակությամբ դործառում է բարբառում. «Նրան տըսնալիս վէրքս նորում»։ Գրաբարյան ֆեմուխտ բառը մեկնվում է որպես «ողորկեալ կաշի՝ գրքի կաղմի համար», որից ֆեմխտական «մագաղաթյա, կաշվե»։ Մովսես խորենացու մոտ հանդիպում ենք ֆեմխտապատ բարդ բառին։ Օրինակ՝ «Զոր անսեալ թագաւորին Բասլաց՝ մօտ հասանէ յարքայն և հանեալ յասպազինէն զներդեայ ֆեմխտապատ պարանն...»⁶։ Իմաստային մի քիչ այլ նրբերանգով ֆեմուխտ-ը օգտագործվում է նաև Ղարաբաղի բարբառում։ Գրաբարում ծիր շըշան, շըշանակ, գիծ» բառը, նույնպես գործածական է բարբառում. (դերբայական ձևն է ծրէլ)։ Ըստ Գավառական բառարանի ծրէլ-ը հիշյալ բարբառում նշանակում է «արտին մեջ ծիր քաշել, արորով արտի մեկ ծայրին մյուսը երթալով ակոս քաշել»⁷։ Միւր-ը կիրառվում էր գրաբարի դասական շըշանից. «Ընդ ծիր երկնից շըշեսցի»⁸։ Բառի՝ «ակոս, գիծ» իմաստն էլ պահել է Ղարաբաղի բարբառը։ Հավանորեն բարբառի «հողը ակոսել» նշանակությունը բառիմաստի նեղացման արդյունքն է, կամ, որ նույնպես հավանական է, այդ նշանակությունը գրաբարը ևս ունեցել է, բայց մեզ գրավոր չի ավանդվել։

Ծյուղ բառի իմաստը բարբառը արտահայտում է երկու բառով. ա) ճէղ-նը, բ) տալ։ Վերջինս, թերևս, հնդ. dhel,—dhl արմատից է. հուն. θάλλει «ընձյուղ, ճյուղ», հայ. դալաւ։ Բարբառային տալ-ը թուրքերենից կատարված փոխառություն լինել չի կարող, որովհետև այդ դեպքում պետք է ունենար ոչ թե տալ, այլ՝ դալ ձևը։ Իսկ հնդ. dh հայ. դ>բրբռ>տ տեղաշարժը օրինաչափ է։ Ուրեմն տալ բառը ոչ թե փոխառություն, այլ բնիկ հայերեն բառ է։

⁴ Բարբառն ունի նաև կեղ համանունը՝ «թիզ, ճկույթի ծայրից մինչև բութ մասի հեռավորությունը», որը, թերևս, գրաբարյան ֆիլ-ն է։

⁵ «Վարդ սրբոյ հարանց», Վենետիկ, 1855, ԺԴ։

⁶ «Մովսիսի խորենացու Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 230—231։

⁷ Հ. Բ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, նշված բառահոգվածը։

⁸ Գիրք Յորայ, ԻԻ, 4։

Գրաբարյան կովեռն «ուղտի ձագ» (հմմտ. «Ուղտս ծնեալս կոզոսմբ հանդերձ»⁹ բառին բարբառում համապատասխանում է չ'օգտակ ձևը: Ակ ածանցի տոկայությունը հուշում է, որ բառը պահպանված ժագում ունի և որպես փոխառություն ավելի հին է, քան գրաբարյան կոզեռն ձևը, բայց բարբառային ձևի հնությունը անվերապահորեն չենք կարող պնդել բառակերպի գ-ի առկայության պատճառով: Հնարավոր է նաև, որ այստեղ ակ-ը պահպանվել է ձ-ը չէ, այլ հայերենի փոքրացուցիչ ածանցը:

Նախքան ընթացիկ հայ մատենագրության մեջ ավանդված է ուշ շրջանից¹⁰: Բարբառում նօթլ բացի բուն՝ «նավթ քսել» իմաստից նօթլ-նեկել կապակցությամբ գործառում է փոխաբերական իմաստով, որպես անեծք: Նթե դժվար է ապացուցել բառի վաղ շրջանի ունեցած կիրառությունը, ապա նրա տարբեր նշանակություններով կիրառությունը վկայում է բառի տարածված գործառության մասին. մի բան որը բնորոշ չէ ինչպես վաղ, այնպես էլ ուշ շրջանի գրաբարին:

Կուռն «թիկունք, ետևի կողմ» բառը բարբառում գործառում է «թև». «ձևուք» իմաստով: Ավանդված է գրաբարի ուշ շրջանից: Բարբառում ունեցած գործառությունը թերևս բառիմաստի որոշակի նեղացման արդյունքն է: Թեև, ինչպես նշեցինք, վաղ գրաբարում կուռն բառի չենք հանդիպում, բայց պետք է ենթադրել, որ այն ուշ շրջանում գործառության մեջ դրված բառ չէ. որովհետև բարբառում ունի տարածված և բազմաբնույթ կիրառություն և օգտագործվում է մի շարք կայուն կապակցություններում. կոռնտ կօտրէ, կօռնտ ծկրէ, կօռնր տալ ռօգնել, ձեռք հասցնել, ձեռքը մի բանի տակ դնել բարձրացնելու կամ գլորելու համար» և այլն: Նոր շրջանում ավանդված բառի նման լայն կիրառությունը, թեկուզ և բարբառներում, նվազ հնարավոր է: Բառը ամենայն հավանականությամբ հայերենի հին բարբառային տարբերակ է, բնիկ հայերեն բառ: Հօգուտ այս փաստի է խոսում բառավերջի ն-ն, որը բնորոշ է հայերեն մի շարք միավանկ բառերի. ինչպես՝ մուկն, ձուկն, ձեռն, դուռն:

Նիտամ բառը վկայված է գրաբարի վաղ շրջանից՝ նիտայցէ ձևով. «Յորժամ կարի յխօրտկօքն գայցեմք, իբր տիկ ուռուցեալ նիտայցէ որովայնն, ղգայրիցի, թառանչիցէ»¹¹: Հնուց վկայված լինելով հանդերձ, բառը գրաբարում նվազ հաճախական էր: Հ. Աճառյանը բառը մեկնում է «տկուռուց հեղալ»¹²: Ղարաբաղի բարբառում այժմ էլ շատ գործածական է այդ բառը: Ընթացիկ հայ մատենագրության մեջ կազմությունները բարբառում շատ են: Օրինակ՝ նիմրտնէլ «մտնել, ներս մտնել», նիկալ «կպնել», նիկեմալ «վառվել» և այլն: Կարելի է ենթադրել, որ այդ նի-ն, հասկանալի որոշ բառերում, ներս, ներս-ի սղված ձևն է: Հենց նիտալ Ղարաբաղի բարբառում նշանակում է «ներս տալ», փոխաբերական իմաստով նաև «շատ ուտել»: Այս իմաստն էլ հարմարվում է վերը բերված գրաբար օրինակին¹³:

⁹ Մնունդք, Բ, 15:

¹⁰ Հ. ր. Աճառյան, Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ, Վենետիկ, 1913, էջ 138:

¹¹ Հ. ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 454:

¹² Նույն տեղում:

¹³ Բոլոր դեպքերում անկախ ծագման բնույթից նի մասնիկը բարբառում նոր երևույթ չէ:

Գրաբարում ուշանալ բալի իմաստը արտահայտում են յետնանամ և յետնիմ բառերը: Առաջինը նվազ հաճախական է, քան երկրորդը: Ղարաբաղի բարբառում նույնպես յըտանալ նշանակում է ուշանալ: Բարբառային յըտանալ-ը գրաբարյան յետնանամն է, որը, ինչպես նշեցինք, քիչ գործածական էր: Յետնանամ և յետնիմ ձևերը ինչ-որ շրջանում եղել են տեղական և ոչ տեղական կերպի արտահայտման ձևեր: Սակայն դասական գրաբարի շրջանից աճ, եճ ածանցները որպես կերպի արտահայտման միջոցներ այլևս գործուն չեն: Յետնիմ ձևի հաճախական կիրառությունը ենթադրել է տալիս, որ այն ավելի ընդունված, գուցե նաև դրական լեզվին բնորոշ ձև է, իսկ ետնանամը թերևս բնորոշ է որևէ տարածքի՝ տվյալ դեպքում արևելյան բարբառներին, իսկ այդ ձևը ցայսօր առկա է Ղարաբաղի բարբառում:

Բարբառային պրբանել՝ աշրջել, շուռ տալ, թափել՝ հանդես է գալիս նաև պարան տալ հարադրության: Երկու ձևով էլ կիրառվում է նաև մի շարք փոխաբերական իմաստներով: Պարանել-ը նշված որևէ իմաստով գրաբարում ավանդված չէ, իսկ բառաձևը միայն մեկ անգամ վկայված է Աստվածաշնչում, որը և բերում է ՆՁԲ-ն¹⁴. «Ելեալ ոգին անդրէն ոչ դառնայ և ոչ պարանի շունչն գրավեալ»: ՆՁԲ-ն բառը մեկնում է «պարանով հոտ քաշել»: Բարբառային պրբանել, պարան տալ ձևերով արտահայտված իմաստները կապվում են հին հայերենում բավական գործուն պար «շուրջ» արմատի հետ, որից ունենք պարեգոտ, պարանոց և այլն: Թերևս կասկածելի պետք է համարել Աստվածաշնչի պարանի-ի «պարանով հոտ քաշել» մեկնությունը: Հնդգծված բառի արմատը դարձյալ պարն է՝ «շուրջ» իմաստով: Անշուշտ նորակազմություն չէ և բարբառային կրթել թեթի վրայի խավը թափել, որի արմատը հ.-հ. kr-ti (*ker, *kr) է «հյուսվածքի կապ, թել»¹⁵: Բարբառում գործածվող այդ բառը նույնպես գրաբարում ավանդված չէ: Հնդգծվողական ծագմամբ, գրաբարում չավանդված, բայց բարբառում գործածվող բառերից են նաև լըմամէլ «ծամել» հ.-հ. lem-loṃ արմատի կրկնություն¹⁶, շֆռել «ոտները լայն բացել», շրկակել «արագ վազել»: Այս վերջին բառը կապվում է հնդ. (s)kek, skeg «ցատկել, արագ շարժում» արմատի հետ, ուսմ. скатать¹⁷: Բարբառային տհանիլ «շնչարգել լինել, հեղել» տհանոց «շնչարգելություն հեղոց» բառերի արմատը կարելի է կապել հ.-հ. dhuen-dhun «ձայն»-ի հետ, խեթ. tuhhai «հեղել», tuhhiatl «հեղոց, շնչարգելություն», հ.-հ. մհ, խեթ. տ, գրբ. դ, բրբ. տ օրինաչափ հնչյունափոխական շղթայում բացակայում է գրաբարյան ձևը: Ենթադրելի են բարբառային տհանիլ, տհանոց ձևերը: Հ-ի առկայությունը այստեղ թերևս կապվում է շնչի, հագագի արտահայտության հետ, որպես բնածայնություն:

Բարբառում գործածվող մի շարք բառեր պահել են գրաբարյան նույն բառի իմաստային նրբերանգր: Այս երևույթը հտգրաբարյան շրջանում կատարված բառիմաստի նեղացում կամ լայնացում չէ, այլ հենց տվյալ

¹⁴ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (ՆՁԲ), հ. II, Վենետիկ, 1837:

¹⁵ Գ. Զահրուկյան, Հին հայերենի հոլովման սխեմներ և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 249:

¹⁶ Բարբառն ունի նաև լեմեթ «ծանրանք», ատամներ:

¹⁷ Գ. Զահրուկյանը s(kek)-, skeg-ի հետ կապում է բարբառային շեկել «ուժգին խփել» բառը («Հայ բարբառագիտության ներածություն», էջ 315):

բառիմաստի՝ գրաբարյան շրջանից անցած կիրառություն: Այսպես, անկիւն բառը բացի հիմնական նշանակությունից դրաբարում ունի նաև «մի կողմ, ծայր» իմաստներ: Հենց այս նշանակությամբ էլ բառը գործածվում է բարբառում:

Տաեիմ գրաբարում և բարբառում գործառում է նաև «տեղավորել, պարունակել» նշանակությամբ. «Եւ ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն» (ՆՀԲ): «Հոբանը էս տօնը տանէլ չի»: Աղօթել բարբառում հանդես է գալիս յրուժել, գիր առնել» նշանակությամբ, իսկ հիմնական իմաստն արտահայտվում է աղօթք անել հարադրությամբ: Հիշենք, որ գրաբարի դասական շրջանում նույնպես ավելի գործառում էր աղօթս առնել հարադրությունը, իսկ աղօթեմ-ը ետադասական ըործածություն է¹⁸:

Բարբառում զգալի թիվ են կազմում նաև այն բառերը, որոնց դարդրիչները գրաբարյան են, իսկ բարդությունն ամբողջովին գրաբարում վկայված չէ: Բերենք հաճախ արմատով մի քանի բառեր: Պիրենհարիւնք, փուրհարիւնք (հիվանդություն է), պիցիհար (բաց-ի-հար), ըխպըհար, «աղբը թափելու տեղ», ֆամհար: Բարբառում շատ բառեր կան նաև հին հայերենի կալարմատով. քերկալ, պանակալ, վըռակալ, քըմըկալած (քամի+կալ) օգտագործվում է «խենթ, առույգ» իմաստով, կըղըկալած, «կեղով պատած», լըպըկալած «կեղտոտված, փառակալած»¹⁹:

Կալ և հաճախ արմատները բառակազմական գործուն արմատներ են և այժմ, դրանք գործուն են եղել թերևս հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում: Ուստի ճիշտ չի լինի կարծել, թե հաճ-ով և կալ-ով կազմված վերագրյալ բարբառային բառերը գործածվել են միայն գրաբարի վաղ շրջանից: Հնարավոր է, որ գրանցից մի քանիսը լինեն հետագայի բարբառային կազմությունների նման բառերի շարքում թերևս ավելի հին են ի նախդիրով կազմությունները՝ խղբ ի հաճ «ըխպըհար» և այլն²⁰:

Քանի որ վերագրյալ բառերի զգալի մասը չկա արդի գրական հայերենում, ըստ երևույթի նաև միջին հայերենում, ուստի դրանք ևս կարելի է հնաբանություններ համարել: Հնաբանություններ կան նաև որոշ բառերի արտասանության մեջ: Ինչպես գիտենք հայոց աբուբեթի հորինման շրջանում՝ V դ. սկզբում գրաբարի գրությունը խստորեն համապատասխանում էր արտասանությանը: Սակայն, բնականորեն, դարերի ընթացքում փոփոխություններ է կրել և լեզվի արտասանական կողմը: Գրաբար տեքստերի ընթերցանության ժամանակ այժմ օգտագործում ենք ոչ թե գրաբարի սկզբնական՝ գրային, այլ՝ փոփոխված, ավանդական արտասանությունը: Օրինակ՝ յԱրամայ բառաձևի սկզբնական արտասանության փոխարեն կարդում են Հարամա: Ավելին, ժամանակակից հայերենին անցած շատ բառեր (գրավոր) պահել են ոչ թե գրաբարի սկզբնական, այլ ավանդական արտասանությունը. յաւուր՝ ավանդական արտասանությամբ՝ հաւուր, որի համապատասխան էլ այժմ այդ բառը գրվում է ոչ թե յավուր, այլ հավուր և այլն: Միանգամայն հասկանալի պատճառով

18 Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 38:

19 Ըստ Գ. Զահուկյանի լեզվ արմատը ծագում է հ-ե. lib/p-ից: Այլ լեզուներում նման օրինակ չկա: Գրաբարում նույնպես այդ արմատն ու համապատասխան բառը չկան («Հայ բարբառագիտություն» ներածություն, էջ 296):

20 Ի նախդիրով կազմությունները բնորոշ են նաև այլ կարգի բառերի հմմտ. պըրաբըր «պորտ ի վեր», կըլիվըր «զուլս ի վայր» և այլն:

գրաբարի սկզբնական արտասանության հետքեր քիչ են բարբառներում, բայց՝ այդուհանդերձ, դրանք կան: Ղարաբաղի բարբառը հարազատորեն է պահել յ-ով սկսվող որոշ բառերի սկզբնական արտասանությունը: Դրանցից են՝ յէխնել, «հաղթել», յէա «հետ», յըղէ «հղի»: յսպուպ «հոպոպ», գրբ., յանգիմ «հարմար լինել», բրբռ.՝ յանգին քցիլ «հարմարեցնել», գրբ. յուղիմ «վաղել»-բրբռ.՝ յօրթ-յօրթ անել «վազվզել»:

Այս օրինակները լրացուցիչ փաստարկներ են մի կողմից մեսրոպյան այբուբենի իրոք գրային և արտասանական համապատասխանության, մյուս կողմից՝ պատմական Արցախի տարածքում հայերենի վաղնջական շրջանից կիրառվելու մասին: Որովհետև եթե, հայկական տարրը Արցախում կազմավորված լիներ ուշ շրջանում, ապա լեզվական շատ նաբանություններ, որոնց թվում և վերջինները, առկա չէին լինի Ղարաբաղի բարբառում: Բարբառում յ-ով սկսվող այլ բառեր էլ կան, որոնց սկզբնական գրությունը և արտասանությունը հղել է առանց, յ-ի ինչպես, յէշիլ «նայել»՝ աշել > աշել ձևից, յըղօնէգ՝ «աղավնի», յեխտ «աղտ»: Այս կարգի բառերը չպետք է նույնացնել նախորդների հետ: Այստեղ գործ ունենք ոչ թե գրային արտասանության, այլ՝ ա > ե (ի > յ) հնչյունափոխության հետ:

Դրաբարում, ժամանակակից հայերենում, այլև բարբառների զգալի մասում հոդ, հոտ, հու բառերը դրվել և արտասանվել են հ-ով: Ղարաբաղի բարբառը հ-ի դիմաց ունի վ՝ վըէղ, վըէտ, վըէր: Պետք է ենթադրել, որ բարբառային այս ձևերը նույնպես հին են և ուշ շրջանում կատարված հ > վ հնչյունափոխության հետևանք չեն: Ի՞նչով կարելի է փաստարկել այս ենթադրությունը:

Ղարաբաղի բարբառին առհասարակ բնորոշ չէ հ > վ փոփոխությունը: Բառասկզբում ինչպես հին՝ գրաբարյան, այնպես էլ նոր բառերը (բացի վերոհիշյալ երեք բառից) բարբառում վ-ի չեն փոխվում: Խոսքը վերաբերում է ինչպես միավանկ, այնպես էլ բազմավանկ բառերին. հոգի-հօֆի, հոգս-հօֆս, հոն-հոն, հով-հօվ, հոգեհաց-հուլբհաց, հոգաբարձու-հուլբարցու, հոտաղ, հովանալ-հուվանալ և այլն: Ավելին, հնդեվրոպական ծագմամբ որոշ բառեր, որոնք գրաբարում բառասկզբում հ չունեն, Ղարաբաղի բարբառում հանդես են գալիս հ-ով՝ ալևու-հըլէվուր, աւիծ-հաւեծ, ով-հու(վ), ոլոն-հուլէնը, ոլու-հըլօր և այլն: Ուրեմն, բարբառում օրինաչափ ոչ թե բառասկզբի հ-ի անկումն է կամ հնչյունափոխությունը, այլ ընդհանրապես՝ շատ բառերում հ-ի հավելագրությունը: Այս հանգամանքները, ինչպես նաև այն, որ բարբառում հ-ի դիմաց վ ունենք միայն երեք բառերում, հիմք է տալիս ենթադրելու, որ վըէղ, վըէտ, վըէր ձևերը Ղարաբաղի բարբառում հնագույն երևույթներ են և, թերևս, ի սկզբանե գործածվում էին այդ ձևով: Նշենք, որ բառաբարդման ժամանակ նույնպես վ-ն պահվում է, լուսնավլէլ «լուսնահող», շընավլէտ «շան հոտ, վատ հոտ»:

Ավելորդ չէ անդրադառնալ նաև այդ բառերի ծագումնաբանությանը: Հոդ բառը բնիկ հայերեն բառ է՝ հնդ. pol ձևից, որի մերձավոր ցեղակիցներն են հին. սլ. polje «դաշտ, արտ»: Որոշ լեզուներում հոդ բառի ծագումը կապվում է հնդեվրոպական sʷol, suł ձևի հետ. (լատ. colum «հատակ, հիմք, երկիր»), ֆր. sol, իտալ. suolo և այլն: Ըստ Հ. Աճառյանի սրանք չեն կարող

տալ հայերեն հոդ ձեր²¹։ Կարելի է հնթադրել, որ բարբառային վրէղ ձևը հենց *suqol*, *sul* ձևերից է։ Հիշենք, որ հնդեվրոպական *s*-ն հայերենի որոշ բառերում սղվում է։ Հմմտ. *salu*-հյ.՝ աղ, հուն. *ais*, *sweks*—**seks*-վեց, սնսկր. *sat* և այլն։ Բարբառային վրէղ-ը սկզբնապես ունեցել է հավանորեն ուղ հնչումը։ Վ-ն արդյունք է հին հայերենի ուօ, օ, ո (վո) շտարբերակված արտասանության։ Այս սկզբունքով կարելի է բացատրել հոտ>վրէտ բառի ծագումը։ Հատ-ը ծագում է հ.-հ. *od* «բուրել, հոտ արձակել» արմատից։ Ավելի հավանականը հայերենի համար օտ ձևն է։ *Od*-ից գրաբարը պահել է հոտ, իսկ բարբառը վրէտ ձևը։ Հնդեվրոպական օ-ն գրաբարում տալիս է նաև ո (վո) հմմտ. *ostwer*—ոսկոր, *osdo*—ոստ, *ol*—ողն։ Այսօր դժվար է ճիշտ ներկայացնել գրաբարյան ո-ի սկզբնական արտասանությունը. այն ունեցել է, թերևս, օ (ոսկոր-օսկոր) գուցե նաև հայերենի որոշ տարածքում վո արտասանությունը։ Եվ այդ ուօ-ն կամ ո-ն (վո) բարբառում հեշտությամբ արտասանվել են վ։ Ընդհանրապես հայերենի ո-ով սկսվող բառերը Ղարաբաղի բարբառում ունեն վ. ինչպես *որս-վրէս* (այլ բարբառներում՝ հօրս, ֆօրս...), *ոսկի-վրսկի*, *ործ-վրց*։ Գրաբարյան ուրիս բառը հայերենի որոշ բառարաններում տվել է օթիդ, հօթիս, իսկ Ղարաբաղում դարձյալ՝ վրէթես։ Ուրեմն վրէղ, վրէտ, վրէ բառերի վ-ն հենց գրաբարի ո (օ)-ն է։ Մի խոսքով, եթե բարբառային ձևերի ստուգաբանական բացատրությունը որոշ ճշգրտման ու այլ փաստարկների անհրաժեշտություն է գոյում, ապա ավելի որոշակի ու հավանական պետք է համարել նշված ձևերում վ-ի առաջացումը ուօ-օ-ու, անցումով, որը նոր երևույթ չէ։ Ինչպես տեսանք վրէղ, վրէտ, վրէ բառերում հ-վ պարզ հնչյունափոխությունը բացառված է։ Ավելի դժվար է հոր-վրէ բառի հարցը։ Գրաբարյան հոր բառի ծագումը ստուգապես պարզ չէ, և ուսումնասիրողները այն կապում են տարբեր արմատների հետ. եբր. *xor*, ասոր. *bur*, ընդհանրապես սեմա-նան *br* արմատից²²։ Հայերենի բարբառներն ունեն *hor*, *hor*, *for* ձևերը. միայն Ղարաբաղի բարբառը՝ վրէ։ *Bur* ձևից անմիջապես վրէ-ի ծագումը հնարավոր չէ, որովհետև *b*>վ անցումը գործուն է միայն հնդեվրոպական լեզուների համար։ Ուրեմն բարբառային վրէ ձևը չի կապվում սեմական համապատասխան արմատների հետ։ Այն նաև, ինչպես վերը տեսանք հոր>վրէ ձևափոխությունը չէ։ Բարբառային վրէ-ը հոր-ին ղուգահեռ ձև է, հայերենի տարածքային տարբերակ, հավանորեն նաև հնդեվրոպական ծագումով, որը պահել է պահլավերենը՝ *vir*—«հօր»։ Վրէ-ը կամ հին փոխառություն է պահլավերենից կամ էլ ծագումնաբանական ընդհանրություն ունի պահլավերենի համապատասխան բառի հետ։ Ի դեպ, վր արմատը «հօր» նշանակությամբ մնացել է նաև հայերեն վիրապ («խոր վիրապ») կապակցության մեջ։ Իսկ վիրապը թերևս նույնպես պահլավերենից փոխառություն է. *vir-i-ab* (*vir* «հօր»+*ab* «ջուր»)։

Վերոգրյալներից ելնելով, կարելի է հավաստել, որ Ղարաբաղի բարբառի վրէղ, վրէտ, վրէ բառերը գրաբարյան հոդ, հոտ, հոր բառերի հ>վ հնչյունափոխված ձևերը չեն։ Դրանք ղուգահեռ ձևեր են, հին բարբառային տարբերակներ՝ բնորոշ պատմական Արցախ-Սյունիքի տարածքին։

²¹ Հ. ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 111։

²² Նույն տեղում, էջ 119։

Վերը բերված օրինակները Ղարաբաղի բարրառում բուռային հնարանությունների մի մասն են: Դրանց, և առհասարակ, հայ բարրառներում առկա բոլոր հնարանությունների վեր հանելն ու համակարգելը լեզվի պատմության ուսումնասիրության առաջնային խնդիրներից մեկը պահաք է համարվի, որի լուծումը կնպաստի լեզվաբանական, և ոչ միայն լեզվաբանական, որոշ կնճռոտ հարցերի հստակացմանը:

ЛЕКСИЧЕСКИЕ АРХАИЗМЫ В КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

ЛАВРЕНТИП АВАНЕСЯН

Резюме

Система армянских диалектов возникла после грабара. Однако в некоторых диалектах, в том числе карабахском, имеется ряд лексических архаизмов. Под этим термином подразумеваются такие слова и словоформы, которые несомненно имеют древние истоки; они засвидетельствованы в диалекте, но отсутствуют в древнеармянском языке: (*տնի*) «ветвь», (*ահանի*) «стонать» и т. д. Некоторые слова наличествуют в грабаре и карабахском диалекте, однако не функционируют или редки в современном литературном языке и в других диалектах.

В рассматриваемом диалекте употребляются также слова, компоненты которых — древнеармянские, но сложное слово в целом не засвидетельствовано в грабаре. Некоторые слова с начальным «j» в современном армянском сохранили свое исконное древнеармянское произношение. К лексическим архаизмам относятся также диалектные формы *վրէղ*, *վրէտ*, *վրէր*: